

սակաւ գովեստս դուզնաբեայ.
ընկալ յինէն իբրու ընծայ:

Շարական չորրորդ գձ. Չայն:

Շնորհազարդ եւ պանծալի նահատակ եւ
յաղթօղ վկայ. տեսաք զքեզ որպէս գանձն ի բերան
գայլոյ, եւ իմաստութեամբ քով յաղթեցեր ն՛մա.
առ Քրիստոս բարեխօսեա՞ վասն անձանց մերոց:

Ըստ իմաստուն սուրբ կուսանացն էիր ար-
թուն պատրաստութեամբ եւ ի յամել սուրբ փե-
սային, ոչ նիրհեցեր որպէս անպատրաստքն եւ ի
գալստեան նորա մըտեր յանազաստ. առ Քրիստոս
բարե՞:

Ո՛վ սուրբ Խանու՛մ անմեղ նահատակ, հո-
ղանիւթեա՞ որպէս ըզհըրեշտակ. հինգ իմաստնիցն
եղեր քանակ, ի քէն հայցեմք անբիծ նահա-
տակ. առ Քրիստոս:

Շարայարեցաւ այս երգքս, ի Թւաբերու-
թեանս հայոց ՌՄ եւ երկուքին (1202+551 =
1753) մայիս ամսոյ էին: Իսկ յետոյ սրբազրեցաւ
ձեռամբ խակակիրթ եւ մեղսամած տրուպ որբա-
ցեալ գրչիս:

(Մտդրն. Մխիթ. Վիեննա, Թ. 156, Թղ.
43ա—46ա:) Սկզբնագիրը կը կազմեն՝ «կարայպետ
Վարդայպետէ»։ Այս ընդօրինակութեան տակ ինքն
կարայպետ վ. յետոյ իւր իսկագիր ձեռագրով
(ճիշդ իր նամակին գիրը) կը յաւելու թէ 1755ին
գրած է սոյն ոտանաւորը:

Ի Թւականիս հայոց որ ի Ռն է

ԲՃ եւ Դ յարաբարդեալ է.

յոտնաչափ շինեցաւ այս կարայպետէ,

վարդայպետ կոչեցեալ որ Հնծացի է:

Այս սրբուհի Խանու՛մ 1755ին Մայիս 3ին
նահատակուած է ի Տաճկաց ի Վաղարշակերս